

ՄԱՐՍԻԼԻՈՅ ԿՍՅՈՐԱՆԻՆ ՄԷՁ

(10 Հոկտեմբեր 1951)

Սեփական թղթակցություն

Մթնշաղ է. աստղերն սկսած են անյայտա-
նալ ու հետզհետե՛ թաւային լոյս մը կը տի-
րապետէ. աստղերուն հետ խումբ մը հայ պա-
տանիններ ալ կը հեռանան այսօր Մարսիլիա-
յէն՝ Վենետիկ տաքուկ արեւուն կարօտով
բռնկած: Ութը հայկական են, սիրուն եւ ըն-
տանի մանչուկներ, որ հրճուանքով կը սպա-
սէին այս օրուան. ու ահա, հայրենիքի կայծ
մը սրտերնուն մէջ՝ կը մեկնին դէպի Վենե-
տիկ, Մուրատ-Ռափայէլեան Վարժարան:

Աշնանային մեկնում մըն է ծիծեռնակնե-
րու, որոնք ուրախ դուրսի կը թռչտին վեր-
ջին անգամ մ'ալ, կայարանին մէջ ալ աշխու-
ժով կը վազվզեն ու կ'երազեն տաքուկ տեղեր:

Արդէն այս երկրորդ երամ է որ կը մեկնի
Մարսիլիայէն դէպի Վենետիկ. առաջինը՝
նախորդ տարուան աշակերտներու խումբն
էր, որ թուած դացած էր շարժմը մը առաջ.
այլեւս Մարսիլիոյ կայարանին անձանթ
բան մը չէր հայ ծիծեռնակներու հրաժեշտի
յետին ճողողիլը:

Ծնողներն ու բարեկամներ, ազուր նուէր-
ներ ձեռքերնին՝ կայարան են եկած, իրենց
սիրասուն գաւակները ճամբայ դնելու. բա-
ժանումի տխրանոյշ պահ է, եւ ամէնուն աչ-
քերուն խորը յոյսի արցունք մը կը ցոլայ:

Կայարան փութացած են նաեւ Մուրատ -
Ռափայէլեան Վարժարանի նախկին Սաներու
Միութեան Մարսիլիոյ մասնաճիւղին աշխոյժ
եւ անձնանուէր նախագահը՝ Պրն. Սուրիկ
էքսերճեան, սրտեռանդն քարտուղարը՝ Պրն.
Ֆերապ, իրենց հետ նաեւ Միութեան անդամ-
ներէն նախկին սաներ, քաջալերելու եւ ոգե-
ւորելու մեկնող մանուկները: Կայարանին մէջ
կարծէք հայ ակումբ մը ստեղծուած է, որ
տեղացիներուն ու շաղկապները կը դրաւէ, եւ
օտարներն ալ յուզուած կը դրաղին մեր սի-
րուն ծիծեռնակներով:

Մայրիկները հրաժեշտի նուէրին, ճաշի
ծրարիկին հետ՝ ջերմ համբույր մը կը դրոշ-
մեն իրենց գաւակի ճակտին, յետին յանձնա-
րարական մըն ալ առաջնորդող վարդապե-
տին՝ Հ. Նիկողայոս Քեհեայեանի, որ իր
զորովոտ սրտով ու անհարկով մեկնող ծի-
ծեռնակներուն հոգին է:

Շուգեկառքը կը սուլէ. տաղնապով վար
կ'իջնեն չմեկնողները, ու քանի մը բոլէ կը
սպասենք տակաւին. յաւիտենականութիւն
մըն է կարծէք, լուռ ամէնքը, աչքերը միայն
կը խօսին. ահա յանկարծ թեթեւ շրթկոց մը
կը մեկնին...:

Թաշկինակներ կը շարժին օդին մէջ.
«Մայրիկ» կը լսուի պատուհանէ մը. բայց
ընթացքը կ'երազի, կը փոքրկանան սիրունիկ
դէմքերը. շուգեկառքը կ'անյայտանայ...:

«Աստուած հետերնին ըլլայ» կը մաղթեն
ծնողներն իրարու եւ վ'ուզուին դէպի տուն:

— Միութեան վարդապետներու խնամ-
քին տակ գաւակնիդ այնքան պիտի մեծնայ,
որ վերադարձին պիտի չճանչնաք — կը դռնէ
խումբին մէջէն տիկին մը: Ես մէկ տարուան
մէջ այնքան փոխուած տեսայ տղաս. սոր-
վեր, զարդացեր, գիրքեր, քսաւն դարձեր
էր երբ Մարսիլիա եկաւ: Չեմ գիտեր ինչ
կ'ընեն Վենետիկի մէջ:

— Դաստիարակելու դադանք մը ունին,
Տիկին, — աւելցուց նախկին սաներէն մէկը.
հայերէն լեզու, պատմութիւն, կրօնք, դրա-
կանութիւն եւայլն եւայլն սորվեցնելէ դատ-
կանոնաւոր ուտել, ամէն բան ուտել կը սոր-
վեցնեն. յետոյ խաղ ունին, մարզանք նմա-
նապէս. չարքաշ կը մեծնան, կանոնաւոր կը
քնանան: Շատ չերկարեմ, տղադ Վենետիկ
դրկեցիր, ալ մի' մտածեր վրան. անիկա հոգ-
ւով, մտքով, սրտով ու մարմնով աճած՝ քո
ձեռքդ կը յանձնեն:

Արդէն կայարանէն ելեր էինք, եւ ուրախ
դուարթ իրարու յաջողութիւն մաղթելով
ցրուեցանք մեր զործերուն:

Թղթակից



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱԾ ԵՆՔ

Ախարոնեան Գոկո. Լեւոն. — Առողջ եւ մաքուր
երիտասարդութիւն. (Հրա. Հայ Կաթ. Երիտ.
թիւ 3): Պէյրութ, Հայ Կաթ. տպ. 1951, էջ 30:

Գալըպեան Տիգրան. — Մարդկային մարմինը.
կազմախօսութիւն, բնախօսութիւն եւ առողջա-
պահութիւն. (նախախօսութիւն լարձր կարգե-
րու համար): Հալէպ, տպ. «Արեւելք», 1951,
էջ 178: Հրա. Բերիոյ թեմի Ուսումնական խոր-
հարդի:

Գասպար Յ. — Հերբում Գիթապը նէ՞ տէր:
Պէյրութ, 1951, էջ 25:

Երեմեան Արամ. — Գրաֆիկ-նկարիչ Վանո Խո-
ջարէկեան: Թէհրան, տպ. «Մոզերն», 1949,
էջ 32:

Կոզեան Հ. Սահակ. — Մելիկ, Մելիկիւնէ, Մա-
լաթիա. (գոտախօսութիւն մը, 12 Դեկտ. 1948,
Ֆիլաթիկա). էջ 27:

Հնուի Գրիգոր Վ. Արք. Կ. Հ. Բերիոյ. — Թուղթ
հովուական. (Աստուածածնի ջերմանդութիւնը
մեր նախնաց քով): Թիւէլ, տպ. «Ոսկեամբ»,
1951, էջ 11:

Մալեգեան Վահան. — Բանաստեղծ Վահան Մա-
լեգեանի ազգային ու զրական վաթսուամեայ
գործունէութիւնը. — Յուշամատեն իր ութ-
սուամեակին տոթով (1871-1951): Փարիզ,
տպ. «Լը Սուէյ», 1951, էջ 264:

Սարաֆեան Գրիգոր Ա. — Վարդանանց պատերազմը
եւ Վարդան Մարտիրոսեան: Ֆրէզնոյ, Գալիֆ.
տպ. «Նոր Օր»-ի, 1951, Բ. տպագրութիւն, էջ
62 (հայերէն ու անգլիերէն):

Սերգոյեան Նշան Յ. — Հաւատարմութիւն, կարգաւ եւ
կարգադրութիւն: Փարիզ, 1950, Ա. եւ Բ. տպագրու-
թիւն, էջ 16, 48:

Քիւրտեան Յ. — Պատր Կէ ձէմալի եւ իր գերդաս-
տանը (բաղում «Հայրենիք» ամսագրէն):

Քիւրտեան Յ. — Ա. տը լա Մօթալի ու գերդաս-
տանը (բաղում «Հայրենիք» ամ-
սագրէն):

Օրագեան Ա. — Միջնադարեան հայ ճարտարապե-
տութիւնը (տիւրիկ). Հրա. «Հայ մշակութի-
ւորականութիւն» մարմինի. Գահիրէ, տպ. Նիւ
Սթեթ, 1951, էջ 18 + 62 պատկեր:

Ֆերահեան Մ. Գ. — Ազատ խոհեր (1100 քառակ-
նէր): Պոսթըն, տպ. «Հայրենիք», 1951, էջ 205:

Հայ Հաւատարմութիւն տո Դերենիկ Եպիսկոպոս. —
Պէյրութ, Հայ Կաթ. տպ. 1951, էջ 28:

Հ. Յ. Գաշնակցութիւնը Եւրոպայի մէջ (60-ամեա-
կին առթիւ). Հրա. Հ. Յ. Գ. Արեւմտ. Եւրո-
պայի Կեդր. Կոմիտէի. Փարիզ, տպ. Ա. Տէր
Յակոբեան, 1951, էջ 128:

Վարդանանց, Հազարհինգհարմեակ Վարդա-
նանց պատերազմի (451-1951). Հրա. Ամերի-
կայի Հայոց Առաջնորդարանի Վարդանանց Տո-
նախօրհանութեան Կեդր. Յանձնաժողովի: Նիւ
Եորք, տպ. Եփրատ, 1951, էջ 48:

Օրացոյց 1952. — Հրա. Հայ Կաթ. Պատրիարքա-
րանի Տանի Կիլիկիոյ: Պէյրութ, Հայ Կաթ.
տպ. էջ 48:

Bridgeman Charles T. — A memorandum showing
the necessity of an international regime for
Jerusalem. New York. 1951, pg. 26.

Brill E. J. — Books on the Orient. Leiden E. J.
Brill, 1951, pg. 96.

Devrish K. — Murmurs of the Muse. St. Paul.
Minnesota, Devrish Press, 1949, pg. 60.

Keshishian Kevork K. — Romantic Cyprus. A
comprehensive guide for tourists and travel-
lers. 1951, 4th edition, pg. 250.

Sarian Annig. — Architettura armena. Milano,
1951.

The Epich of Saint Vardan the Brave. A Publi-
cation of the Comittee for the celebration of
the Fifteen Hundreth Anniversary of Var-
danians. New York, N. Y. 1951, pg. 103.

ԸՆԴ ՄԱՍԼՈՎ

Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՃԱՆԱՇԵԱՆ-Ի

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԳԻ ՀԱՅ ԳՐԱԳՆՈՒԹԵԱՆ

ԱՐՏԱԽԱՉԻ ԱՐԲ. ՄԻՐՄԻՅԵԱՆ-Ի

ԲԱՌԳԻՐԻ Ս. ԳՐՈՅ